


նէն: Իրապէս առողջարար օդն այն է որ աւելի թթւածին ունի եւ ի փոշոյ ապւտ է: Շատ տաքցած եւ ծխալից եւ հեղձուցիչ տեղերէն հեռանալու է:

Բ. Զգեստեղէնն օդին բարեխառնութեան համաձայն տաք պէտք է ըլլալ, բայց ոչ ոյնպէս որ մարմինը մեղիկ: Ոտուշները միշտ տաք պահելու է. ընդհակառակն վիղն ու գլուխը ըստ կարելոյն ազատ եւ հոլանի ըլլան:



ՆՈՐԱԳԻՒՑ ԸԹԻՍՈՐՈՐՑ

Ի լրումն մեր տուած տեղեկութեան այս նշանակող գիւտին, որուն հեղինակն է Տնդկահայ Մ. Յ. Փօլ, (տես Հաւելս Ա.Մ. 1894, թիւ 6, էջ 187—9) ուրախ ենք ծանուցանել կարենալու որ արդէն գործնական ասպարեղ սկսած է մտնել յիշեալ գիւտը: Հայազգոյն գիւտը գործադրելու համար կազմուած է արդէն Ընկերութիւն մ'ապա անուամբ, The rapid coaling barge company (Paul's system) limited, որ բովանդակ Բրիտանիոյ համար ստացած է զայն գործածելու արտոնութիւնը: Ընկերութեան գրամագլուխն է 220.000 անգլիական ոսկի՝ բաժնուած 36.000 սոլդրական եւ 8000 վերսպահեալ բաժնեկցելու, որոնց իւրաքանիւր 5 ոսկի գնով հրապարակ հանուած է: Այժմ արդէն բաժնեկցելուն մեծագոյն մասը գնուած է մէկ շաբթուան մէջ. (16—22 Օգոստ): Ընկերութեան վարիչք կը խոստանան յիշեալ ամիսաբարձէն 65 ապա շինել եւ գործածել. եւ որովհետեւ ամէն նաւական ընկերութիւնք փորձերու ժամանակ գովութեամբ խօսած են յիշեալ գիւտին արդեանց եւ մեծ օգտին վրայ, կը խոստանան դրամագլխոյն առնուած 15 առհարիւր շահ զձաքել: Ար լսենք որ Անգղիոյ ազգայինք ժիր մանակցութիւն կ'ընծայեն գիւտիս գործադրութեան յաջողման:



Ընկերութեան վարիչներն են՝ W. A. St. Aubyn Angove, esq. (Lloyd's), Sydney Walker Barnaby, esq. etc. (The Hollies, Chiswick Mall, Middlesex) եւ ի. ի. առ. ժամանակեայ ընտրութիւնք է՝ A. D. Saunders. (11 Leadenhall street, Lond. E. C.) գրամատուան լինչ գիւտը Ազգային Գլու առական Գործմատուան (The National Provincial Bank of England limited, 112 Bishopsgate Street, London E. C.)

ՓՈՐՈՑՈՑ

(Էրաւնիս-Բիւն.)

Ժամացոյցներու մեծագոյն մասն ու վաճառականութեան գլխաւոր առարկան են ծոցի ժամացոյցները: Այս կարեւոր մասնաճիւղին արտադրութիւնը Հաւասարապէս կը բաժնուի գլխաւորաբար Հելուետիոյ, Գաղղիոյ եւ Անգղիոյ վրայ՝ իւրաքանչիւր երկիրն իր յատուկ կերպն ու սեփական արուեստն ու նշնալով: Անգղիական ժամացոյցներն արգարեւ շատ հաստատուն են եւ արտաքուստ ճշգրտութեամբ կը գործեն. սակայն ցամաք երկրին ժամացոյցներուն հետ ի համեմատութեան բերելով՝ բաւական սուղ են եւ նուազ թւով կը վաճառուին: Գաղղիականներն աւելի թիւթեւ կը յօրինուին, եւ գլխաւորաբար իրենց գեղեցիկ ճաշակովն ու զարդերով կ'ուզեն ամէնուն սիրտն իրենց յանկուցանել. մինչդեռ հելուետականներն՝ հաստաբար առաւելու թիւներէն զատ՝ աւելի դիւրագին են, որով կրնան մեծամեծ հրապարակներ իրենց սեփականել եւ ամէնուն ճաշակը գոհացնել: Հելուետական ժամագործութեան գլխաւոր կայաններն են Ղալէնպուրկի գաւառներն ու Գենօթ (Genève): Գրեթէ մարդոս չի կրնար Գենօթ, Լոբլ, Իփեր քաղաքներու առունները տալ՝ առանց անոնց ժամացոյցներն յիշելու: Հելուետացի առաջին ժամագործը՝ հանճարեղ երիտասարդ մը Բիթարտ անուամբ՝ ինքն իրմէ սկսաւ ժամագործութիւնն եւ զարգացաւ հակաբայլ՝ երբ 1679ին Նիւուպրեկեան ձուածնէ զարմանալի ժամացոյց մը տեսաւ: Իւր գործատունը մայր եղաւ բոլոր միւսերուն: Հելուետական ժամագործութեան ձեռնարուեստն տարածումն ու կարեւորութիւնը կրնանք ասկէ չափել՝ որ 1856ին 1,100.000էն աւելի ժամացոյց ի պատրաստի կար, մինչդեռ գործատանց մէջ շախտողներուն թիւը հասցել 400.000ի կը հասնէր: Գաղղիական ժամագործութիւնն այնչափ տարածուած չէ. գլխաւոր գործատանց վայրն է Պրզանսն. մինչդեռ Փարիզ գլխաւորաբար ձօճանակաւոր ժամացոյցով կը զբաղի: ՅԱնգղիա ժամագործութեան առաջին կայանն են Լիւստոն, Պիրմինգհամ ու Չէսթըր. (Chester.) Ժամագործութեան տարածման աւելի եւս նպաստելու համար՝ վերյիշեալ կենդանական կայաններու մէջ ժամագործութեան զարդոցն հետաառաժան են, ուստի ճարտար վարիչներն ընելով՝ ճարտարագոյն գեղեցիկ ժամացոյցներ կը հանեն, եւ աշխարհիս ամէն կողմն կը յուղարկեն գիւրացիներ: Անոր համար այս-

օրւան օրս գրեթէ չկայ այլ կամ կին երկտասարդ կամ ծեր, հարուստ կամ աղքատ, որ իւր ծոցը չկրէ ժամացոյց մը, որուն վրայ նշանակուած են մեր օրըստօրեայ գործոց ընթացքն ու նոյն իսկ մեր կենաց վայրկեանները:

Յ. Յ. ԹՈՒՆԻՍԻՆԵՆԸ



ՄՅԵԼԵՐԱՅԻՆ

ՏՈՂԵՐԻ ԶՐՈՒՆԵՐ

Եւրո մարդկային հանձարն իննուտասներորդ դարուս երկրորդ կիսուն մէջ ջանացած է նորանոր գիւտերով սպանել զնշեհին այնպիսի կատարելութեան հասցնելու, որ գիմաքն ելողը նաեւ մեծ հեռաւորութեամբ՝ անպատճառ մահուան ենթարկուի, նոյն հանձարն ուրիշ կողմանէ իւր հնարագիտութիւնը բանեցուցած է այսպիսի անհարկեր հրազենաց զօրութիւնն ի դերու հանելու եւ զմարդն անոնց առջեւ անփնաս պահելու: Այս մարդասիրական ջանքն ապարդիւն չէ եղած, ինչպէս մօտերս եղած փորձերը ցուցած են: Զարմանալին այն է, որ մարդու կենաց պաշտպան հանդիսացող ոչ զինուորական հանձարներէն (généie) է եւ ոչ բժիշկագէտներէն, այլ ասեղ շարժողներէն՝ բայց ոչ վերաւորելու, այլ լաթերն իրարու կցելու համար: Չերկնցրենք, այս հերոսը Տոլէ անուով Բրուսիայի գերձակ մըն է:

Եւրո Տոլէ անցած տարի հրատարակեց թէ զրահ մը հնարած է, զոր որ եւ ինչ նորագիտ հրացանի գնտակը չի կրնար ծակել՝ բանդագուշող մը համարուեցաւ, ծաղուեցաւ եւ ոչ խօսուելու արժանի սեպուեցաւ: Սակայն անի այս հակառակութիւններէն ու արհամարհանքներէն չընկճեցաւ, չըհատեցաւ. իւր հնարած զրահը կատարելագործելէ եւ զանազան փորձեր ընելէն ետեւ այս տարի յայտարարութեամբ մը հասարակութիւնը փորձի մը հրաւիրեց. ինք այն զրահն հագնի եւ ուղղով որ եւ ինչ հեռաւորութիւնէ իւր վրայ գնտանքն արձակէ ամենակատարեալ նորագիտ հրացաններով: Ոստիկանութիւնն այս փորձն արգիլեց, բայց այս անգամ հասարակութեան եւ գլխաւորաբար պետերազմի պաշտօնարանին մտադրութիւնը գրգռուեցաւ եւ ուղուեցաւ որ անփնաս փորձ մ'ըլլուի: Ուստի Պերլին չըբախկեալ ձմեռանոցին մէջ ժողովուեցան Շուվարով կոմս, բաղմաթիւ ցամաքային եւ ծովական բարձրաս-

տիձան պաշտօնակալք, եւրոպական մեծամեծ քաղաքաց փոխմորդք եւ բաղմաթիւ երեւելի անձինք գրեթէ ամեն երկիրներէ եւ զրահը տակտակի վրայ անցրելով՝ ամեն տեսակ հրացան վրան պարպեցին եւ տեսան թէ ոչ միայն զրահը չծակեցաւ այլ եւ ոչ զձեցաւ: Ան տեսն զրահը ձիու մը հագցուցին եւ Մարթին իւր հնարած հրացանով, անոր վրայ նշան առաւ երբ ձին հանդարտութեամբ խար ուտելու վրայ էր, ուրիշներ սրածայր փամփռաւոր հրացաններ (modell 88) վրան պարպեցին: Զին իւր գործըն ամենեւին չընդհատեց: Գնտը զրահը գաճէ կիսարձանի մ'անցուցին եւ նոյն փորձը կրկնեցին եւ արձանն անշարժ տեղը կեցաւ: Գնդակները զրահը չծակելէն զատ՝ անոր վրայ թախախցան եւ կտրուած ստեղի թերթիկներու պէս հազար կտոր Լգած գիւրիւն ինկան: Ուրիշ առաւելութիւնն մ'եւս տեսուեցաւ զրահին վրայ, որ գնդակներուն բուռն զօրութիւնն այնպէս կը կտորէ, որ զայն հագնողն ամենեւին ընդհարում կամ ցնցում չէրգար: Արքայապէս հրաման տրուեցաւ Տոլէին որ՝ իւր բաղձանացն համեմատ զրահն հագնի եւ զանազան հրացաններով զանազան հեռաւորութեամբ վրան նշան առնի եւ փորձն այնպիսի յաջողութիւն ունեցաւ, որ ուրիշներ ալ համարձակութիւնն առին ուղելու որ փորձն իրենց վրայ ալ ըլլուի:

Զայնուեցաւ ուրեմն որ Տոլէ բանդագուշող չէր եւ իւր գիւտն իսկապէս որ եւ է հրացանի դիմադրող է, սակայն պատերապի պաշտօնարանն զայն այս ձեւի մէջ զինուորաց գործածութեան յարմար չգտաւ, որովհետեւ զրահն նախ ծանր է եւ երկրորդ հարթերես, որով զինուորաց ազատ շարժմանց արգելք կ'ըլլայ: Տոլէին ներկայացուցածը 16 լիւր ծանր է եւ 2 հարկերողական մեթր հաստ. բայց հնարիւք կը խոստանայ անոր ծանրութիւնը կէսի ինքնցնելու, եւ եթէ կարենայ զայն այնպէս կատարելագործել որ կարելի ըլլայ անոր ագանեւեաց կամ համազգեստի ձեւը տալ այնպէս որ հագնողին դիւրաշարժութիւնն ամենեւին չխախտուի եւս ամեն պատերազմական ուղեւորութեան յեղափոխութիւն մը կ'ըլլայ եւ հնարողն իւր անունը կ'անմահացնէ: Այսու ամենայնիւ կ'ըսուի թէ եղած փորձերէն Գերմանիայի կայսրն այնպէս հետաքրքրուած է որ իւր բաղձանքն յայտնած ըլլայ սոյնպիսի փորձերու ինք անձամբ ներկայ գտնուելու:

